ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Բիոլոգիական գիտ. XIII, № 9, 1960 Биологические науки

Ա. Լ. ԹԱԽՏԱՋՅԱՆ

(Ծննդյան 50-ամյակի առթիվ)

Վերջերս լրացավ Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, դոկտոր-պրոֆեսոր Արմեն Լեոնի Թախտաջյանի ծննդյան 50 տարին։

Ա. Լ. Թախտաջյանի աշխատանքները տեսական բոտանիկայի բնագավառում վերաբերում են բույսերի էվոլյուցիայի ու մորֆոլոգիայի ամենալայն և ամենաընդհանուր հարցերին։

Բոտանիկ-հետազոտողի աշխատանքի հետ մեկտեղ, Արմեն Լեոնիչը միանգամից սկսում է նաև իր դասախոսական գործունեությունը Երևանի պետական համալսարանում։ Մի կողմից բարձրագույն դպրոցի դասատուի և մյուս կողմից կենդանի բնության հետազոտողի, «դաշտային բոտանիկի», կրքոտ հերբարիզատորի աշխատանքի զուգորդումը նրա ստեղծագործական մեթոդի բնութագրական գիծն է հանդիսանում։

Ընկ. Ա. Թախտաջյանը հեղինակ է բոտանիկայի վերաբերյալ մի շարք մենագրական աշխատությունների։ Նրա գրչին են պատկանում այնպիսի աշխատություններ, ինչպես՝ «Հայաստանի բուսականության բոտանիկա-աշխարհագրական ակնարկ» (1941), «Ծածկասերմնավորների մորֆոլոգիական էվոլյուցիան» (1948), «Բույսերի էվոլյուցիոն մորֆոլոգիայի հարցերը» (1954), «Ծածկասերմնավոր բույսերի առաջացումը» (1956), «Բարձրակարգ բույսեր» դասագիրք, հատ. 1 (1958), «Ծածկասերմնավորների էվոլյուցիան» (1959)։ Այդ աշխատությունները խիստ արժեքավոր ավանդ են հանդիսանում տեսական ու կիրառական բոտանիկայի ասպարեզում։

Ա. Լ. Թախտաջյանի կողմից նկարագրվել են բույսերի մի ամբողջ շարք ցեղեր ու տեսակներ, որոնք նոր են գիտության համար։ Մի քանի տեսակներ են նկարագրվել նաև ի պատիվ նրա։

Արմեն Լեոնիչի աշխատությունները լայնորեն հայտնի են ոչ միայն Սովետական Միությունում, այլև նրա սահմաններից շատ հեռու։

Ներկայումս, Արմեն Լեոնիչը ղեկավարում է Լենինգրադի Համամիութենական բուսաբանական ինստիտուտի պալեոբոտանիկայի բաժինը, միաժամանակ հանդիսանալով նաև Լենինգրադի համալսարանի բոտանիկայի ամբիոնի պրոֆեսոր։

Որպես Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ և Հայաստանի ֆլորայի ու բուսաբանության լավագույն գիտակ, Արմեն Լեոնովիչը ամեն տարի գալիս է Հայաստան, ուր մասնակցություն է ցուցաբերում կազմակերպվող ֆլորիստիկական դիտարշավներում, խմբագրում է «Հայաստանի ֆլորան» բազմահատոր աշխատությունը, որի առաջին երեք հատորներն արդեն լույս են տեսել։ Նշանակալից է Արմեն Լեոնիչի աշխատանքը ռեսպուբլիկայի բոտանիկական գիտությունը ազգային կադրերով ամրապնդելու ասպարեզում։